ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

01.06.2015 թ. N

# ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ
## *ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ*

Ձերմ բարեմաղթանքներով շնորհավորում եմ Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա առթիվ:

Երեխաների նկատմամբ ընդգծված հոգատարության ու անսահման ջերմության ցուցաբերումը բոլոր ժամանակներում համարվել և համարվում են հայ ընտանիքների ու մեր հասարակության առանցքային սկզբունքները, որոնք այսօր առավել ամրապնդվում և կատարելագործվում են:

Տոնական այս օրվա շրջանակներում պետք է փաստենք նաև, որ երեխայի իրավունքների պաշտպանությունը մեր երկրում իրականացվող պետական քաղաքականության գերակա ուղղություններից է, որի շրջանակներում պարբերաբար իրականացվում են համակողմանի գործընթացներ:

*Սիրելի՛ երեխաներ*

Դարձյալ շնորհավորում եմ տոնական օրվա կապակցությամբ և մաղթում, որ Ձեր ժպտադեմ հայացքներից երբեք չպակասեն մանկական անհոգությունն ու շրջապատված լինեք միմիայն սիրով և բարությամբ:

*Հարգանքներով*

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ